



ՀԱՏՈՐ ԻԷ.

1889

ՅՈՒԼԻՍ

### Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք

ԼՈՒԾՈՒԾՆ ԲԱՆԱՔԱՂՈՒԹԵԱՆ ԿՈՐԵԱՆ  
 ԿՈՄ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ, ՀԱՆԴԵՐԶ ՎՈՒԵՐՈՒԹԵԱՆՈՒԹԵԱՄԲ  
 ԸՆԴԱՐՁԱԿ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ  
 Ս. ՄԵՍՐՈՎԲՈՑ



**Ա**ՌՔԱՆԳԵՂԱՑ գրոց ձԼ զլիսահամարէն ցձԺԱ, ՏՐԸ-  
 դատայ պատմութիւնն և գործերը այնպէս կը զուգ-  
 ընթանան Գրիգորի պատմութեան և գործոց հետ,  
 որ դժուար կը լինի այնուհետև որոշել, թէ ո՛ր  
 պատմէ վայնս, կամ լաւ ևս ըսելով, արդեօք Տրդա-  
 տայ թէ Գրիգորի կենսագրին իցեն ընծայելի այս  
 հատուածներս: Այս՝ և սորա նախընթաց գլխոյն յէջ  
 581 և 582 միջանկեալ երկու պարբերութիւնքն, որ  
 կը սկսին՝ «Անդ էր այնուհետև սրտալիր ուրախութիւն», բառ առ  
 բառ նոյն են ընդ կորեան՝: Ահաւասիկ նոր դժուարութիւն մի ևս, որ  
 Ազաթանգեղեայ Բ. Գրոց հարազատութեան վրայ, գէթ ըստ մասին,  
 կասկած կու տայ: Մի և նոյն տեղեաց մէջ և մի և նոյն բառերով հա-  
 տուածներ, որովք առ Ազաթանգեղ՝ քրիստոնէութեան կամ Աւե-  
 տարանի մուտքն ՚ի Հայս, նորա գործած մեծամեծ սքանչելիքն՝

1. Պատմ. Վարուց և մահուան Ս. Մեսրոփոց, ապ. ՚ի Վերնեթի 1833, էջ 13.  
 Այս տպագրիս համեմատ պիտի լինին յիշատակութիւնք նաև միւս տեղեաց:

այլովք հանդերձ կը նկարագրուին. առ կորեան, ընդ հակառակն, հայերէն նշանագրոց գիւտի մեծ դէպքն 'ի ձեռն Մեսրոպբայ, և նորագործած մեծագոյն յեղափոխութիւնն և վարդապետութիւնը կ'աւանդուին: Թերևս կարելի լինէր պատահական համարել այս նորանշան երևոյթս, եթէ վերոյիշեալ երկու տեղիքը միայն էին: Սակայն որքան անգրագոյնս յառաջնէք՝ այնքան ևս նմանաբան տեղիք յաճախ մեզ ընդ առաջ կը լինին: Թէջ 584-586 և 588-589 երկու տեղիք, յորս կը պատմուի Գրիգորի բերնով աւետարանի քարոզութիւնն յԱրտաշատ և 'ի Թորդան, նման են կորեան 7-8 էջ տեղւոյն հետ, ուր կը պատմուի Ս. Մեսրոպբայ քարոզութիւնն 'ի Գողթան դաւառի. միայն թէ առ Ագաթանգեղ՝ դէքն մարդակերպ կը փախչին Խաղտեաց և կովկասու լեռները. իսկ առ կորեան ընդհակառակն, 'ի Մարս, Թէջ 613 յետ ձեռնագրութեանն՝ Գրիգորի 'ի ստորոտս Նպատ լերին հասնին և Տրդատայ ընդ առաջ նմա երթալու պարբերութիւնը՝ նոյն է կորեան յէջ 19 գ. պարբերութեան հետ, ուր Մեսրոպբ երբ կ. Պօլէն վերագառնալով Հայոց ոստանին կը մօտենայ՝ թագաւորն և կաթողիկոս կը դիմաւորեն նմա. միայն թէ առ Ագաթանգեղ Եփրատ գետը կը յիշուի, իսկ առ կորեան Ռահ գետը: Թէջ 627 « Եւ այսպէս » մինչև « աւետարանութիւն », և յէջ 628 « Չամենայն ժամանակս » մինչև ցէջն 630 պարբերութիւնքն բառ առ բառ նոյն են կորեան 22 էջով պարբերութեանց հետ: Յագաթանգեղոս՝ Գրիգորի առաքինագարդ և խստակրօն վարուց և զարմանագործութեանց հանդէսը կը նկարագրուի, իսկ առ կորեան՝ Մեսրոպբայն: Թէջ 631-636 հատուածները՝ ճիշդ կը համապատասխանեն կորեան 23 և 24 էջերու հատուածոց, միայն թէ, առաջնոյն քով ընդհատուած կը տեսնուին միջանկեալ տեղեկութեամբք: Թէջ 636, ճիգ գլխահամարով սկսող պարբերութիւնը՝ նոյն է կորեան 12 իջի բ. պարբերութեան հետ, յորում Մովսէս մարգարէական գասով, և Պօղոս առաքելական գնդաւ կու գան 'ի ծանօթութիւն Հայաստանեայց, բայց ըստ կենսագրին՝ Լուսաւորչի ձեռքով, իսկ ըստ կորեան՝ Հայերէն դպրութեան և Մեսրոպբայ վարդապետութեամբ, Թէջ 651-652, ինչպէս նաև յէջ 654-655 Տրդատայ և Գրիգորի երթին առ կոստանդիանոս և Սեղբատրոս, մեծալուք ընդունելութեան, ընծայընկալութեան, և փառապանծ դարձին հատուածները՝ նոյն են կորեան 17 իջին, ուր Մեսրոպբ կ'երթայ 'ի Բիւզանդիոն առ Թէոդոս փոքր և առ Ատտիկոս և կը դառնայ մեծագանձ ռոճկօք և արքայական սպասաւորօք, և այլն: Թէջ 657 « Ապա յետ այսպիսի գործոց » սկսեալ պարբերութեանէն ցէջն 660 պարբերութիւնքը, յորս կ'աւանդուին Գրիգորի Յաճախապատում ճառից գրութիւնն, աւետարանական ընթացքն, եկեղեցւոյ վերակացութիւնը, Տրդատայ և ուրիշ աշակերտելոց հետ Չամենայն ժամանակս կատարուած հոգևոր գործերն և պարագայքը, նոյն են

կորեան 21 և 22 էջերու պարբերութեանցը հետ, Յէջ 661 « Ոչ եթէ 'ի հին համբաւուց » մինչև ցէջն 663 « յազգս ազգաց » պարբերութիւնքն, որոնք կը կազմեն Ագաթանգեղայ գրոց վերջաբանը, նոյն են բառ առ բառ կորեան վերջաբանին հետ՝ որ յէջ 28: Կը թողում քստ յիշել 'ի Յառաջաբանի անդ և այլուր եղած ուրիշ փոքրիկ հատուածներ և նման բացատրութիւններ, որոնց կաղանխքն Ագաթանգեղայ թարգմանութեան վրայ խօսած ժամանակ կը յուսամ պարզել:

Այս զարմանալի երևոյթս՝ արդէն 'ի վաղուց անգրադարձան և անդրագարձուցին Մխիթարեան Հարբս՝ իրենց այլ և այլ հրատարակութեանց և բաղդատութեանց մէջ. սակայն առանց մասնաւոր կարևորութիւն մի տալու այնմ. մանաւանդ թէ չտարակուսեցան բնաուղղակի զիորիւն, համարել բանաբաղ Ագաթանգեղոսի, և դնել զագաթանգեղոսեան հատուածան իբր հնագոյն և հարազատ աղբիւրս կենսագրութեան Մեսրոպայ: Երկու ծանօթ ազգային բանասէրք ևս, ըստ իմումս գիտութեան, մրցեցան և մրցին տակաւին ընդ իրեարս՝ իրարմէ տարբեր կարծեաց լծոյն տակ, և մինչև ցարգ ոչ ոք 'ի նոցանէ արար լծնկէց զմիւսն: Գուտջմիգ՝ առաջինն եղաւ որ իւր երկասիրութեան՝ մէջ անաչառ քննութեան ենթարկեց բոլոր այս տեղիքս և ցանկեց իսկ առնթեր գործոց Գրիգորի և Հովհիսիմեանց վկայաբանութեան: Ըստ կարծեաց գերմանացի քննադատին 1<sup>o</sup>. Ոչ եթէ կորիւն՝ այլ Ագաթանգեղոս է բանաբաղը. 2<sup>o</sup>. կորիւնէն առնուած տեղիքը, ներմուծուած են Գրիգորի հնագոյն եկեղանագրոճքիս և հատուծոց մէջ, բայց ոչ եթէ անոր հեղինակն՝ այլ յետին ժամանակի գործակից ոմն համարելու ենք իբր արարող այս բանաբաղութեանցս. 3<sup>o</sup>. Թէ այդ գործակցին կատարեալ և ծառայաբար նմանութիւնն՝ որ աստ պայծառ կը տեսնուի, կ'երաշխաւորէ մեզ, թէ, այն հնագոյն աղբերքը՝ զորս նա ընդօրինակեց, նոյնը բառ առ բառ վերստին կ'ընծայէ մեզ՝ ըստ իսկականին:

Սակայն իմ կարծիքով ոչ Ագաթանգեղոս եղած է բանաբաղ կորեան և ոչ զիորիւն ուղղակի բանաբաղ համարելու ենք Ագաթանգեղայ. այլ նա ինքն կորիւն՝ է բանաբաղ ինքեան: Տեսնենք զգիտողն գործոյս:

Արդ գորգեան հանգոյցէն աւելի այս կնճռոտ խնդիրն յաջողութեամբ լուծելու համար, պէտք է նախ կորեան երկասիրութեան հարազատութիւնն ապացուցանել, որքան որ գործս կը ներէ: Ասայս նախ կարևոր կը համարիմ ծանուցանել հետևեալը՝ զոր Գուշմիգ բնա գիտած չէ. այսինքն է, յանուն կորեան կրկին Պատ.

1. Չամչեան. Պատմ. Հայոց հա. Լ. էջ 668-669. — 2. Գարեգին Ա. Հոյհ. հին Դպր. Բ. տպ. Վենետիկ 1886, էջ 294: Եւ այլ ոմն 'ի լուսանցս ք. օրինակի կորեան, զոր 'ի հնագոյն ձեռագրէ միոջ օրինակեց Տիրացու Գէորգ և առաքեց 'ի վանս:  
3. Agathangelus. 8. 24 — 31.

մուշիւնք Ս. Մեսրոպոսայ մեզի հասած են, որոնք իրարմէ շատ կը տարբերին. այնպէս որ 'ի միոյն ձեռնարկեալ հետեւութիւնքը՝ կարող են միւսոյն ձեռքով ոչ ընչանալ. Առաջինն է ընդարձակ, որոյ տպագրութիւնն եղաւ յամին 1833, 'ի հնագոյն և 'ի վաւերական երկու նօտրգիր ձեռագրոց վրայէն, Մատենագրութիւնք ևսխնեաց խորագրով: Իսկ միւսն՝ համառօտ, որուն հրատարակութիւնն եղած է յամին 1854ի՝ պարիզեան արքունի մատենադարանի հնագոյն և կէս երկաթագիր ձեռագրին համեմատ, և 'ի շարս Հայկ. Սոփերոսց կը կազմէ ժԱ. հատորը: Այսմ'բաց 'ի վերոյիշեալ երկու նօտրգիրներէն՝ կան նաև երեք ուրիշ օրինակներ ևս, որք գրեթէ համաձայն են 1833ի հրատարակութեան, Պարիզեան ձեռագիրը միայն է ուրեմն որ սոյն բացառութիւնը կը ներկայացնէ մեզ, գէթ ըստ իմ ծանօթութեանս, բայց նորա հնութիւնը մեծ նշանակութիւն ունի: Ոճը սեղմ է, աւելի ազդու, կոկ և հասկանալի: Բաղդատելով 1833ի հրատարակութեան հետ, դուք կը կարծեք թէ մի և նոյն անձին և նիւթոյն վրայ ճառող երկու իրարմէ տարբեր հեղինակութիւններ լինէին: Կարծեմ թէ չենք սխալիր յասելն, թէ Մեսրոպոս այս համառօտ պատմութիւնը ճիշդ. այն կերպով կը գտնուի ընդարձակին մէջ, ինչ կերպով կը գտնուին ընդարձակ պատմութեան վերոյիշեալ հատուածները՝ Ագաթանգեղեայ գրոց մէջ. այսինքն է, ոչ այն միայօդ շարունակութեամբ զոր ընթերցողը կը նկատէ համառօտին մէջ. այլ շարունակ ընդհատուած են իրենցմէ ընդարձակագոյն տեղեկութեամբք, որոնք բոլորովին նոր և տարբեր պատմական եղելութիւններ կը յայտնեն, զորս 'ի զուր է որոնել համառօտին մէջ: Արդ Մեսրոպոսայ համառօտ պատմութիւնն եթէ կորեան հարազատ երկասիրութիւն համարինք, այն ժամանակ Գուտշմիդի ենթադրութիւնն՝ հիմն 'ի վեր կը տապալի. որովհետև հազիւ թէ երից կամ չորից սեղեաց նմանութիւն կայ ընդ այս և ընդ Ագաթանգեղայ, և այն իսկ ոչ այնպէս բառ առ բառ:

Սակայն քանի որ իրն յինքեան, այս ինքն է, այդ երկասիրութեան հարազատութիւնը տարակուսական է, ես չեմ կարող բաւական ապացոյց համարել զայս ընդդէմ Գուտշմիդի: Այլ զայս կարեմ ասել թէ Մեսրոպոսայ այդ համառօտ պատմութիւնն՝ այդ վիճակի մէջ չէ պարտ համարել ամբողջական գործ մի կորեան, այլ նորա ընդարձակ պատմութենէն ընտրանօք եղած ծաղկաքաղ մի վարուց Ս. Մեսրոպոսայ, զոր ըրաւ յետագայ ոմն 'ի յընթերցումն իւր և կամ վասն հոգեսիրի ուրումն, և կամ յօրինող զք ճատընտրաց: Եւ ստուգիւ ապացոյց են առ այս նախ Լուսաւորայ, Սահակայ և նորին իսկ Մեսրոպոսայ ուրիշ կենսագրութիւններն: Բ. Հաւանօրէն այսպիսի պարագայով մի կորեան յատուկ և այլոց անիմանալի խրթնաբանութիւնք, որոց ստեպ կը հանդիպի ընթերցողն, ընդարձակին մէջ՝

կոկուած և պարզուած են ըստ մեծի մասին: Գ. Եթէ այդ երկասիրութենէն դուրս թողունք Ագաթանդեղայնմանարան հատուածները, կը մնայ մի բանի էջ բան, որ ոչ միայն չի լինիր արժանի կորեան, այլ և ոչ իսկ կարէ լինել ստոյգ կենսադրութիւն վարուց և գործոց Մեսրոփայ. որովհետև ասա զանց եղած են բոլոր այն պատմական անձինքն և պարագաները, զորս 'ի մէջ կը բերեն Մովսէս և Ղազար՝ յանուն կորեան: Ուրեմն իրն յինքեան պայտէս լինելով՝ կը մնայ ընդունել իբր հարազատ և ամբողջական գործ կորեան՝ 1833ի հրատարակուած ընդարձակ Մեսրոփայ պատմութիւնը:

Եւ յիրաւի, այս բանիս յայտնի ապացոյց պէտք ենք համարել նախ Հայկ. Ուփերաց հա. բ. էջ 6. Ս. Սանսկայ և Մեսրոփայ պատմութեան անանուն՝ բայց ոսկեգրիչ հեղինակի՝ վկայութիւնը, որ 'ի բազում տեղիս յատուկ անուանց և պատմական դիպաց մասին (օրին. իմն Ս. Սահակայ և Մեսրոփայ կենաց, գործոց և մահուան, և նշանազրոց գիւտին) վերոյիշեալ հրատարակութեան համաձայն պատմելով՝ կը յարէ յէջ 37, թէ «Եւ այսպիսի քաղաքավարութիւն նոցա, մանաւանդ թէ ևս առաւել քան զայն զոր գրեալ է 'ի կառուարեալ պատմութեան նոցա»: Այս վկայութիւնս կորեան ընդարձակ պատմութեան միայն 'ի գէպ գայ, ուր ստուգիւ մանրամասն պարագաներով կը յիշուին իբր, և ոչ բնաւ համառօտին: Բ. Ապացոյց կը համարիմ՝ ես կորեան յէջ 28 հետեւեալ խօսքերն. «Եւ առ 'ի մանրակրկիտ առնելոյ զկարևորագոյնս և պատմելոյ զանգամաւնս ասացաք»: Գ. Եէջ 24 կ'ըսէ, թէ հրամանաւ Սահակայ 'ի Բիւզանդիոն գացող աշակերտաց առաջինն՝ էր Ղևոնդ, երկրորդն՝ Եղնիկ և երրորդն՝ Կորիւնս. հինգ օրինակներ միաբանս ոչ իմարոջ յօղիւ կը գրեն վերջին անունը. իսկ համառօտին մէջ, ընդհակառակն, առանց զիմ որոյի: Արդ այս երկոյթս յայտնի նշան է թէ ընդարձակին հեղինակն էր կորիւն և կ'ուզէ ըսել «երրորդն՝ ես կորիւն»: Եէջ 16 ուր վրաց

1. Այս երկասիրութեան մէջ՝ բայց յընդհանուր համաձայնութենէ պատմական իրաց՝ կը գտնուին 'ի բազում տեղիս համանման հատուածք բանից և բացարձակութիւնք ընդ այս և ընդ պատմութեան թորեանցոյ, յորոց զերկուս միայն բաւական կը համարիմ մէջ բերել աստ: Եէջ 8 կ'ըսուի վասն Սահակայ և Մեսրոփայ, թէ «Վասն զի ուր ոչ լինէին մերձ սուրբ Սահակ և Մեսրոփ, ոչ կարէին իմանալ ըզվերանուութիւն Ս. Գրոց, և զպիտակն ի լուսաւոր վարդապետութենէն»: Նոյնը կ'ըսուի փոքր ինչ տարբերութեամբ բանից առ Մովսիսի Գ. գլ. ԽԷ: Եէջ 7. Ս. Սահակայ 'ի Տիգրան առ Թադաւորն Պարսից երթին և մեծարուելուն համար կ'ըսուի. «Եւ մեծարի 'ի նմանէ յաւեալ վեհաբոյն պատուով վասն զի արքայ և պատուական ցուցանէ զժողայս իւր Աստուած առաջի անհաւատից»: Նոյնը կը գտնենք ճիշդ թորեանցոյ պատմութեան Գ. ԺԱ. գլխուն մէջ: Այս գրութեանս լեզուն իսկ ոսկեգրեան է: Ուստի կարելի է չետեցընել թէ այս տեղերս կամ 'ի Մովսիսի փոխ անուած են, և կամ ուղղակի Մովսէս եղած է հեղինակ այս պատմութեանս: Վերջին ենթադրութիւնս եթէ ստուգուի, այնուհետև պէտք է ըսել, թէ երկասիրութիւնս եղած է աղբիւր Ղազարայ և Մովսիսի հասարակ տեղեաց, զոր նորայր անստուգութեան մէջ թողած է:

վրայ կը խօսուի՝ գրուած է այսպէս. « Որոց և իմ անարժանիս Ե. ղեալ ՚ի կարգ եպիսկոպոսաւորեանս վիճակ Ծ. Ե իրօք Հայոց աւան- ղութիւն է թէ կորիւն կարգեալ էր եպիսկոպոս վրաց՝ յետ Սա- մուէլի. այս բանս ևս չիք ՚ի համառօտն. Գ. Թէ՛ Վ. Յառաջարանին, հեղինակն ինք զինքն աշակերտ կը կոչէ վարդապետին Ս. Մեսրոպայ, որուն կենսագրութեանը ձեռք կը զարնէ. և յէ՛ջ 28 ՚ի վերջարանին, ԿՍ. Մեսրոպը հայր իւր կամ վարդապետ կը կոչէ, յասեւն. « Ոչ եթէ սուտապատում՝ ճարտարախօս եղեալ զձօրեկն իմոյ պատմե- ցաք Ծ. Համառօտին մէջ սոյն բացատրութիւնները կը պակսին, որով- հետ և նորա հեղինակն համառօտող էր և ոչ պրոգ, յետագայ ոմն թերևս և ոչ աշակերտ: Ընդարձակ պատմութեան Յառաջարանի մէջ հեղինակը կը ծանուցանէ, թէ Յովսէփ կաթողիկոսի հրատի- րանօք կը գրէ Մեսրոպայ պատմութիւնն և ՚ի քաջալերութիւն աշա- կերտակցացն. այս բանս գլխովին պատմական է, ինչպէս և յէ՛ն 28 քաջ կը տեսնուի. սակայն համառօտին մէջ այս կարևոր տե- ղեկութիւնս չիկայ: Թէ՛ Վ. 6, այսպէս և յալլ տեղիս, հայրն գիւտի նշանագրոց միշտ իւր հնագոյն անուանակոչութեամբը Մաշտոց կը գրուի. իսկ համառօտին մէջ, ընդ հակառակն միշտ Մետրոպոստոսի պատուանուամբը: Թէ՛ Վ. 14. բարեպաշտ իշխանն Գողթնեաց երկիցս Շարաթ և Շամբաթ կը կոչուի. համառօտին մէջ Շարիթ գրուած է. երկու ձև իսկ մի և նոյն անուան կը գտնենք առ Սովսիսի (յէ՛ջ 104, 105 և 475. նշանագրոց գիւտին և Մեսրոպայ պատմութեան հետ սերտիւ կապուած են Հարէշ, Վահրիձ, Բարիշաւ, Ակակիոս և Գիկո, որք կը յիշուին յընդարձակն յէ՛ջ 8 և 9. այսպէս նաև Սիւնեաց իշխանին Վաղնակայ, և եպիսկոպոսին Անուսիայ անուանքը որ յէ՛ջ 14. ինչպէս վրաց նշանագրոց գիւտի պատմութեան մէջ ալ Բակուր թագաւորին, Մովսէս եպիսկոպոսին և Զաղայ թարգ- մանին, որ կը յիշուին յէ՛ջ 15, այսպէս և Աղուանից նշանագրոց պատ- մութեան մէջ Արավաղ թագաւորին, Մուշեղ եպիսկոպոսին և Յով- նաբան քահանայի անուանքը, որ յէ՛ջ 19. ի քարոզութեան անդ զԱւետարանն Հայոց, վրաց և Աղուանից սահմանաց վրայ՝ Ս. Մեսրոպ- րայ հետ անմուաց են նաև նորա գործակցաց Տիրաշրի խորձենացոյ, Մուշէի Տարօնացոյ, Ենովքայ, Դաւանու՝ Թողկայ կամ Թաղիկայ, Յովսէփայ, Յովնանու (Մանդակունու) և Գուայ անուանքը՝ զորս յիշէ ընդարձակ պատմութիւն յէ՛ջ 14, 18 և՛ 27. Արդ այս ա- մենայն կը պակասին համառօտին մէջ, հանդերձ յարակից պատմու- թեամբք և պարագաներով:

Ե. Մ. Խորենացոյ պատմութեան Գ. գրոց թէ — կէ՛զ զլուսներն եթէ բազդատենք կորեան այդ ընդարձակ պատմութեան հետ՝ գեղեցիկ համաձայնութիւնն յայտնապէս կը տեսնուի բոլոր այն պատմական անձանց և զիպաց մասին: Ի գլուխն ՀԲ. համաձայն կորեան 8 և 9

էջերուն կը ծանուցանէ վառամշակոյցայ երթն, յԱտորիս և զհանդիպումն Ս. Մեսրոպբայ, գանիէլեան նշանագրոց գիւտը, նորա ուսուցանեմն և անյախող ելբը. ՀԴ գլխում՝ ուր կը պատմէ վրաց և Աղուանից նշանագրոց գիւտը, ճիշդ կը համաձայնի կորեան 15 էջի աւանդա-ծին, յերկուսին միանգամայն կը յիշուի Ս. Մեսրոպբայ երթն յաշխարհն Սիւնեաց, և նոցա իշխանին վասակայ ձեռնտուութիւնը, զոր չէ մարթ գտնել համառօտին մէջ: Կ գլխուն մէջ համաձայն 19 և 20 իջիցն կորեան կը պատմէ զկրկին առաքելութիւն Ս. Մեսրոպբայ յաշխարհս Հայոց, վրաց և Աղուանից. մի վասն վարդապետութեան նշանագրոց, միւս ևս՝ վասն քարոզութեան Աւետարանին. ուր կը յիշուին Գարդմանաց իշխանն խոշրս, թագաւորն վրաց Արմինդ և իշխանն Տաշրաց Աշուշայ: Իսկ համառօտին մէջ ընդ հակառակն մի միայն առաքելութիւն կը յիշուի: ՀԸ գլխուն մէջ կը պատմէ Մովսէս վառամշակոյցայ որդւոյն Արտաշրի կամ Արտաշէսի թագաւորելն, որ համաձայն է կորեան 18 իջին, ուր կ'ըսուի թէ Մեսրոպբայ յետ երկրորդ առաքելութեան և զալտեան 'ի վաղարշապատ՝ հանդիպեցաւ կաթողիկոսին Սահակայ և թագաւորին Հայոց Արտաշիսի: Եւ իրօք այս ժամանակս վախճանած էր վառամշակոյց: ԿԳ գլխում կը յիշէ Ս. Սահակայ թաղման հանդիսին մէջ զտիկիւնն Մամիկոնէից Դատրիկ, որ էր կին վարդանայ սարատելատի. սոյնը կը գտնեմք կորեան յէջ 25: Այսպէս նաև ԿՍ գլուխն՝ յորում կը պատմուին համաձայն կորեան, սերմնացան Նեստորականաց գալուստն 'ի Հայս և նոցա պատուհասակոծ արտաքսումն 'ի ձեռն Ս. Սահակայ:

Շարունակելի

Լ. ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳՍԵԱՆ

ԵՋՆԻԿ ԵՒ ԻԻՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆ



**Ս**եբ ոսկեգարեան ինքնագիր մատենագրաց մէջ չկայ մէկն որ այնքան փոփոխութիւն կրած ըլլայ (գոնեաւ ըստ այլայլութեան կարգին), ինչպէս մեր ոսկեխօսիկն Եզնիկ: Վասնզի ինչպէս կարելի պիտի ըլլայ մեկնել այն ամէն ետևառայութիւնը և ընդհատմունք իմաստից՝ որք յաճախ կը պատահին ընթերցողին աչաց, եթէ չընենք այսպիսի օրինաւոր ենթադրութիւն մի (ենթադրութիւն՝ զոր ստիպեալ ենք ընել գրեթէ մեր բոլոր ձեռագրաց նկատմամբ), թէ օտարաց ձեռք կամ օրինակորք խանգարած ըլլան այն հոյակապ շէնքը, որոյ երկու գեղեցիկ ձիւղբերն էին՝ ճոխութիւն իմաստից և հմտութեանց, որ յետ այնքան այլայլութեանց ցարդ